

«Վավերացնում եմ»

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ. Քոչարյան

1 օգոստոսի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հուլիսի 2006 թվականի N 1026-Ն

935 ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՏԵՆԵՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ստանդարտացման մասին»՝ Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 7-ի N 419-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 6 ամիս հետո.

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2006 թ հուլիսի 26
երևան

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ԶԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆԿԱԾ
ԲԵՐՐԻ ԶԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐԻ

I. ԿԻՐԱԴՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1 Հողի բերրի շերտի համման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը (այսուհետ տեխնիկական կանոնակարգ) սահմանում է հողի բերրի շերտի համման նորմերը և հանված բերրի շերտի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները հողային աշխատանքներ կատարելիս հողերի պահպանությունն ապահովելու, ցածր արդյունավետություն ունեցող հանդակների բերրիությունը բարձրացնելու և ռեկուլտիվացվող հողերի բերրիությունը վերականգնելու համար

2 Սույն տեխնիկական կանոնակարգի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող հողածածկույթի խախտումների հետ կապ ունեցող բոլոր տեսակի հողային աշխատանքների կատարման վրա

II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3 Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառված են հետևյալ հասկացությունները՝

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ և աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ զենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

հողի տիպ՝ դասակարգման հիմնական միավոր, որը բնութագրվում է հողագոյացման ռեժիմներով և գործընթացներով պայմանավորված հատկությունների ամբողջությամբ և հիմնական զենետիկական հորիզոնների միասնական համակարգով

հողի ենթատիպ՝ տիպի սահմաններում դասակարգման միավոր, որը բնութագրվում է զենետիկական հորիզոնների համակարգի որակական տարբերություններով և մեկ այլ տիպի փոխարկումը բնութագրող վերադիր գործընթացների դրսևորմամբ

հողի ընտանիք՝ ենթատիպի սահմաններում դասակարգման միավոր, որը որոշվում է հողակլանիչ համալիրի կազմի առանձնահատկություններով, աղային պրոֆիլի բնույթով, նորագոյացությունների հիմնական ձևերով

հողի տեսակ՝ ընտանիքի սահմաններում դասակարգման միավոր, որը բնութագրում է հողի ընտանիքը տեսակը և ենթատիպը որոշող հողագոյացնող գործընթացների արտահայտվածության աստիճանը

հողի տարատեսակ՝ դասակարգման միավոր, որը հաշվի է առնում հողերի բաժանումն ըստ ամբողջ հողային պրոֆիլի գրանուլամետրիկ կազմի

հողային հորիզոն՝ հողագոյացնող գործընթացի ազդեցության արդյունքում առաջացած հողային պրոֆիլի յուրահատուկ շերտ

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և

զենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

հողի խտություն՝ առանց բնական կազմությունը խախտելու վերցված հողի չոր զանգվածի հարաբերությունն է վերցված հողի ծավալին (տ/մ³).

հողի բերրիություն՝ սնուցման տարրերի, խոնավության ու օդի նկատմամբ բույսերի պահանջը բավարարող և դրանց բնականոն կենսագործունեության պայմաններն ապահովող հողի ունակություն.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ բիոհիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հումուս՝ հողի օրգանական նյութ, որը բնական միացությունների բարդ խառնուրդ է և գոյանում է բուսական ու կենդանական մնացորդների, ինչպես նաև օրգանիզմների կենսագործունեության արգասիքների քայքայման արդյունքում.

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողածածկույթի կառուցվածք՝ տարբեր աստիճաններով զենետիկորեն իրար կապակցված և որոշակի տարածական պատկեր ստեղծող տարրական հողային արեալների դասավորություն.

հողերի քարտեզագրում՝ հողային քարտեզների կամ դրանց առանձին հատկությունների քարտեզ-սխեմաների կազմում.

հողի կատիոնային փոխանակության ունակություն՝ կատիոնների առավելագույն քանակն է, որը հողում կարող է գտնվել փոխանակվող վիճակում.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ³), զանգվածը (տ).

հողի բերրի շերտի խառնուրդ՝ հողի մեկ կամ մի քանի տարատեսակների հանման ընթացքում միախառնված զենետիկ հորիզոններ, որոնք բնութագրվում են հողի հատկանիշների ընդհանրացված ցուցանիշներով.

քարքարոտ և խճացված հող՝ հող, որի մեկ հեկտարի 30 մետրանոց շերտում պարունակվում է 50 մ³-ից ավելի քար և խիճ.

խիստ քարքարոտ և խճացված հող՝ հող, որի մեկ հեկտարի 30 մետրանոց շերտում պարունակվում է 500 մ³-ից ավելի քար և խիճ.

որոշվածության աստիճան (թույլ, միջին, խիստ)՝ որոշվում է հողային պրոֆիլում էրոզիայի արդյունքում չքայքայված զենետիկ հորիզոնների առկայությամբ:

III. Հողի բերրի և խճացված հողի հանման նորմերի շերտերի Ներկայացված Տեխնիկական Պահանջները

4. Հողի բերրի շերտի հանման նորմերին ներկայացվող պահանջներն են՝

Հողի բերրի շերտի հանման նորմերը որոշվում են՝ ելնելով հողի բերրի շերտի բաղադրությունից և հատկություններից՝ սույն տեխնիկական պահանջներին համապատասխան: Հողի բերրի շերտի հանումը պետք է կատարվի հողային խոշորամասշտաբ քարտեզների և լաբորատոր հետազոտությունների տվյալների հիման վրա:

5. Հողի բերրի շերտի բաղադրությանը ներկայացվող պահանջներն են՝

Հողի բերրի շերտի բաղադրության ցուցանիշներն են հողի բերրի շերտի և պտտենցիալ բերրի շերտի հումուսի զանգվածային մասը, հողի ջրային մզվածքի pH-ը, փոխանակային նատրիումի զանգվածային մասը, ջրում լուծվող թունավոր աղերի զանգվածային մասը և հողի բերրի շերտի (0,1 մմ-ից փոքր) հողային մասնիկների զանգվածային մասը, որոնց նկատմամբ կիրառվում են հետևյալ պահանջները՝

ա) հումուսի զանգվածային մասը (%) հողի բերրի շերտի ստորին սահմաններում՝ ըստ բնական գոտիների պետք է համապատասխանի N 1 աղյուսակում ներկայացված նորմերին՝

Աղյուսակ N 1

Գոտու անվանումը	Հողերի տիպերը	Հումուսի զանգվածային բաժինը (%)
Կիսաանապատային	կիսաանապատային գորշ	1-ից ոչ պակաս
	ոռոզեյի մարգագետնային գորշ	1-ից ոչ պակաս
	պալեոհիդրոմորֆ	1-ից ոչ պակաս
	կապակցված	1-ից ոչ պակաս
	ալկալիացած	1-ից ոչ պակաս
Չոր տափաստանային	աղուտ-ալկալի	1-ից ոչ պակաս
	շագանակագույն	2-ից ոչ պակաս
Տափաստանային	սևահողեր	2-ից ոչ պակաս
	մարգագետնասևահողային	2-ից ոչ պակաս
	գետնահովտադարավանդային	2-ից ոչ պակաս
	հողագրունտաներ	1-ից ոչ պակաս
Անտառային	անտառային գորշ	2-ից ոչ պակաս
	ճմակաբրնձատային	2-ից ոչ պակաս
	դարչնագույն	2-ից ոչ պակաս
Լեռնամարգագետնային	լեռնամարգագետնային	2-ից ոչ պակաս
	մարգագետնատափաստանային	2-ից ոչ պակաս

բ) հումուսի զանգվածային մասը (%) հողի պտտենցիալ բերրի շերտում պետք է լինի՝

անտառատափաստանային և տափաստանային գոտիներում՝ 1-2 %,

չորատափաստանային և անապատային գոտիներում՝ 0,5-1%.

գ) հողի բերրի շերտի՝

աղային մզվածքի pH-ի մեծությունը պետք է լինի 5.5-8,2,

լեռնային գոտիների հողերում ջրային մզվածքի pH-ը պետք է լինի 4,0-ից ոչ պակաս,

ճանապարհային հողերի բերրի շերտի աղային մզվածքի pH-ի մեծությունը պետք է լինի 4,5-ից ոչ պակաս,

հողի տորֆային շերտում աղային մզվածքի pH-ի մեծությունը պետք է լինի 3,0-8,2.

դ) փոխանակային նատրիումի զանգվածային մասը (%) հողի կատիոնային փոխանակման ունակության կազմում պետք է համապատասխանի N 2 աղյուսակում ներկայացված նորմերին՝

Աղյուսակ N 2

Հողերի և դրանց խառնուրդների տիպերը	Փոխանակային նատրիումի զանգվածային մասը (%)
Սևահողեր	5-ից ոչ ավելի
Մուգ շագանակագույն հողեր	5-ից ոչ ավելի
Շագանակագույն հողեր	5-ից ոչ ավելի

Մոխրագույն հողերի արդուտների հետ առաջագող խառնուրդներ	5-ից ոչ ավելի
Անտառատափաստանային և անապատային գոտիների հիդրոմորֆ հողերի թույլ և միջին արդուտային տարատեսակներ	15-ից ոչ ավելի
Պակաս հումուսացված սևահողերի թույլ և միջին արդուտացված տարատեսակներ	10-ից ոչ ավելի
Գորշ հողեր	10-ից ոչ ավելի
Զոր տափաստանային և կիսաանապատային գոտիների հիդրոմորֆ, կիսահիդրոմորֆ հողեր	10-ից ոչ ավելի

ե) ջրում լուծվող թունավոր աղերի զանգվածային մասը (%) հողի բերրի շերտում չպետք է գերազանցի հողի զանգվածի 0,25%-ը Ոռոգվող տարածքների հողի բերրի շերտում ջրում լուծվող թունավոր աղերի պարունակության թուլատրելի սահմանը կարող է մեծացվել մինչև 0,5%:

զ) հողի բերրի շերտի 0,1 մմ-ից փոքր հողային մասնիկների զանգվածային մասը պետք է լինի 10-75%, իսկ ողողադաշտային, հնահունային, գետաբերանային ավազաններում և մերձջրանցքային ավազային նստվածքներում պետք է լինի 5-10%-ի տիրույթում:

6. Հողերի տիպային, ենթատիպային և տեսակային պատկանելությունը որոշելու համար անհրաժեշտ է իրականացնել հողերի խոշորամասշտաբ քարտեզագրում կամ հողերի առանձին հատկությունների (հողագոյացման ռեժիմներով և գործընթացներով պայմանավորված հատկությունների և հիմնական գեներտիկական հորիզոնների) քարտեզ-սխեմաների կազմում:

7. Կավային և ավազակավային մեխանիկական կազմ ունեցող հողերի հիմնական տիպերի և ենթատիպերի բերրի շերտի հանման նորմը (խորությունը, սմ) պետք է համապատասխանի N 3 աղյուսակում ներկայացված նորմերին՝

Աղյուսակ N 3

Հողային գոտիները	Հողերի տիպերը և ենթատիպերը	Բերրի շերտի հանման խորությունը (սմ)
Կիսաանապատային	կիսաանապատային գորշ	մինչև 30
	ոռոգելի մարգագետնային գորշ	30-80
	պալեոհիդրոմորֆ կապակցված այլալիացած	-
	հիդրոմորֆ արդուտ-այլալի	-
Զոր տափաստանային	չազանակազույն	30-40
Տափաստանային	սևահողեր	50-120
	մարգագետնասևահողային	60-100
	գետնահովտադարավանդային	40-120
Անտառային	անտառային գորշ	20-80
	ճնակարթոնատային	20-40
	դարչնագույն	20-80
Լեռնամարգագետնային	լեռնամարգագետնային	30-80
	մարգագետնատափաստանային	20-70

8. Հողի բերրի շերտի հանման նորմա չի սահմանվում՝

ա) խիստ խճացված, խիստ և շատ խիստ քարքարոտ, թույլ, միջին և խիստ ողողված ճմամոխրահողային, գորշ անտառային, մոխրագույն և անտառային բաց մոխրագույն հողերի համար,

բ) միջին և խիստ ողողված անտառային մուգ մոխրագույն, մուգ շագանակագույն, ճակարկոնատային և մոխրագույն հողերի համար

9. Հողի բերրի և պոտենցիալ բերրի շերտի հանման նորմերի հաշվարկը՝

1) Հողի բերրի և պոտենցիալ բերրի շերտի հանման նորմը (Ն)՝ արտահայտված մ³-ով

ա) մեկ հողային կոնտուրի դեպքում հաշվարկվում է 1-ին բանաձևով

$$N = h_1 \cdot U \quad (1),$$

որտեղ՝

h₁-ն հողի բերրի շերտի հանման խորությունն է (մ),

U-ն հողի հանվող բերրի շերտի հողային կոնտուրի մակերեսն է (մ²),

բ) հողային կոնտուրների խմբի դեպքում հաշվարկվում է 2-րդ բանաձևով

$$\sum N_i = h_1 \cdot U_1 + h_2 \cdot U_2 + \dots + h_i \cdot U_i \quad (2),$$

որտեղ՝

h₁, h₂, ..., h_i-ն հողի բերրի շերտի հանման խորություններն են (մ),

U₁, U₂, ..., U_i-ն հողի հանվող բերրի շերտի կոնտուրների մակերեսներն են (մ²)

2) Հողի բերրի և պոտենցիալ բերրի շերտերի հանման նորմը (Ն)՝ արտահայտված տոննայով՝

ա) մեկ հողային կոնտուրի դեպքում հաշվարկվում է 3-րդ բանաձևով

$$N = h_1 \cdot U \cdot \Gamma \quad (3),$$

որտեղ

h₁-ն բերրի շերտի հանման խորությունն է (մ),

U-ն հողի հանվող բերրի շերտի հողային կոնտուրի մակերեսն է (մ²),

Γ-ն հողի բերրի շերտի խտությունն է (տ/մ³),

բ) հողային կոնտուրների խմբի դեպքում հաշվարկվում է 4-րդ բանաձևով

$$\sum N_i = h_1 \cdot U_1 \cdot \Gamma_1 + h_2 \cdot U_2 \cdot \Gamma_2 + \dots + h_i \cdot U_i \cdot \Gamma_i \quad (4),$$

որտեղ

h₁, h₂, ..., h_i-ն հողի բերրի շերտի հանման խորություններն են (մ),

U₁, U₂, ..., U_i-ն հողի հանվող բերրի շերտի կոնտուրների մակերեսներն են (մ²),

Γ₁, Γ₂, ..., Γ_i-ն հողի բերրի շերտի խտություններն են (տ/մ³)

IV. Հողի բերրի շերտի ՀԱՆՄԱՆՆ ԴՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

10. Հողի բերրի շերտի հանումը և արդյունավետ օգտագործումը հողային աշխատանքներ կատարելիս իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված բոլոր կատեգորիաների հողերի համար

11. Գծային կառույցների, մելիորացիայի համար նախատեսվող օբյեկտների շինարարության դեպքում հանված հողի բերրի շերտը պետք է օգտագործվի առանց դրա պահեստավորման և պահման շինարարության հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացման և դրանց հարող ցածր բերրիություն ունեցող հանդակների բարելավման համար.

12. Հողի բերրի շերտի, պոտենցիալ բերրի շերտի և դրանց խառնուրդների հանման

նպատակահարմարությունը որոշվում է ըստ տվյալ տարածաշրջանի հողածածկույթի բերրիության մակարդակի, բնական գոտու, հողի տիպերի և ենթատիպերի ու հողի հատկությունների հիմնական ցուցանիշների սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված պահանջների համաձայն

13. Կավային, ավազակավային, կավաավազային հողերի բերրի և պոտենցիալ բերրի շերտերը հանվում են ցածր արդյունավետություն ունեցող հանդակների հողայնացման և հողերի կենսաբանական ռեկուլտիվացման նպատակով:

Ավազային մեխանիկական կազմ ունեցող հողերից բերրի շերտը հանվում է միայն մշակովի կամ մշակովի դարձված տարածքներից:

14. Անտառներով զբաղեցված տարածքներում 10 սմ-ից պակաս հզորություն ունեցող հողի բերրի շերտը հանման ենթակա չէ:

15. Հողի բերրի և պոտենցիալ բերրի շերտը հանվում է ընտրողաբար: Հողի հանված բերրի շերտն օգտագործվում է փոքր արդյունավետություն ունեցող հանդակները հողայնացնելու և հողերի կենսաբանական ռեկուլտիվացման համար, իսկ պոտենցիալ բերրի շերտը հիմնականում օգտագործվում է հողերի կենսաբանական ռեկուլտիվացիայի համար

16. Հողային աշխատանքներ կատարելիս հողի պոտենցիալ բերրի շերտն անհրաժեշտ է հանել պոտենցիալ բերրի ապարներից առանձին:

17. Հողի բերրի շերտը հանվում է տարվա տաք և չոր ժամանակաշրջանում: Նախքան բերրի շերտը հանելը՝ կատարվում են հողի մակերեսից կոճղերի, թփերի և խոշոր բարերի մաքրման նախապատրաստական աշխատանքներ:

**V. ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ԵՎ ՊՈՏԵՆԿԻԱԼ ԲԵՐՐԻ ՀԱՆՎՈՂ ՇԵՐՏԵՐԻ
ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՁՈՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆԸ
ՆԵՐՎԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ**

18. Հողի բերրի և պոտենցիալ բերրի հանվող շերտերի հզորությունը որոշվում է հողի բերրիության մակարդակի և հողածածկույթի կառուցվածքի, հողերի հիմնական տիպերի ու ենթատիպերի և հողային պրոֆիլի առանձին գեներտիկական հորիզոնների բերրիության զնահատումների հիման վրա:

19. Հողերի բերրիության մակարդակը զնահատվում է դրանց հատկությունների մասին տվյալներն ուսումնասիրելու հիման վրա հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության վերաբերյալ բազմամյա տվյալների առկայության դեպքում:

20. Հանվող հողի շերտերի խառնուրդների բերրիության մակարդակը պետք է ավելի բարձր լինի տվյալ տարածաշրջանում հողայնացման ենթակա ցածր արդյունավետություն ունեցող հանդակների բերրիության մակարդակից:

21. Հանվող հողի ստորին հորիզոնի կամ դրա մասերի բերրիությունը պետք է ավելի բարձր լինի տվյալ տարածաշրջանում ցածր արդյունավետություն ունեցող հանդակների բերրիության մակարդակից:

22. Կախված տարբեր գոտիների հողերի տիպերից ու ենթատիպերից, հողագոյացման ու հողային պրոֆիլի փոփոխության վրա ազդեցություն ունեցող այլ գործոններից՝ անհրաժեշտ է տարբերակել հողերի հատկությունների այն ցուցանիշները, որոնցով որոշվում է հողերի բերրի և պոտենցիալ բերրի հանվող շերտերի հզորությունը:

VI. ՀՈՂԻ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՅԱՆ ԴԱՅԱՆՋՆԵՐԸ

23. Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես պետք է դարսվի լայնակույտերով:

24. Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:

25 Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները պետք է ամրացվեն խոտացանքով կամ այլ եղանակներով

Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով

26 Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի

27 Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում և պետք է բացառվի լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը

VII. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

28 Հողի բերրի շերտը չպետք է պարունակի ռադիոակտիվ տարրերի ժանր մետաղների, պեստիցիդների մնացորդային քանակների և այլ վտանգավոր ու թունավոր միացությունների այնպիսի քանակություններ, որոնք գերազանցում են հողում դրանց համար սահմանված սահմանային թույլատրելի չափաքանակները

29 Հողի բերրի շերտը չպետք է աղտոտված և աղբոտված լինի արդյունաբերական և կենցաղային թափոններով, կոշտ առարկաներով քարերով, խճով ու շինարարական աղբով, ինչպես նաև պետք է համապատասխանի սանիտարահիգիենիկ պահանջներին

VIII. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՅՈՒԿՈՒԹՅՈՒՆԸ

30 Հողի բերրի շերտի հանման, օգտագործման և պահման պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

IX. ՀԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ

31 Հողում պարունակվող նյութերի չափումների միասնականության ապահովումը պետք է իրականացվի «Հափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան